# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.

Վարդուհի Վարդանյան

ՀՀ ֆինանսների նախարարության ֆինանսաբյուջետային վերահսկողության վարչության ֆինանսաբյուջետային վերահսկողության 2-րդ բաժնի գլխավոր վերահսկող

2. Գործուղման վայրը և ժամկետները.

Ղազախստանի Հանրապետություն (ք. Ալմաթի)՝ 2024 թվականի հոկտեմբերի 28-ից մինչև նոյեմբերի 1-ը ներառյալ

3. Հրավիրող կողմը.

Կովկասի, Կենտրոնական Ասիայի և Մոնղոլիայի տարածաշրջանային կարողությունների զարգացման կենտրոն (CCAMTAC)

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Մասնակցություն «Կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուտների ձևավորում/ Building Institutions To Fight Corruption» թեմայով դասընթացին, տարբեր երկրների պետական ֆինանսների կառավարման փորձին ծանոթանալու և ՀՀ-ում դրա զարգացման նպատակով:

5. Քննարկված թեմաները

- Արժույթի միջազգային հիմնադրամի մոտեցումը կառավարման և կոռուպցիայի դեմ պայքարում. ընդլայնված շրջանակ
- Կառավարման և կոռուպցիայի խոցելիությունը գնահատելու պարամետրեր – Կառավարման ախտորոշում
- Կառավարման խոցելիությունները ՊՖԿ (PFM) ցիկլում
- Բյուջետային ցիկլի տարբեր փուլերում խոցելիության աղբյուրները. կանխարգելման և մեղմացման գործողությունների կոնկրետ առաջարկություններ
- Հարկաբյուջետային թափանցիկության և տարածաշրջանային միտումների կարևորությունը. ֆիսկալ տեղեկատվության բացահայտման միջազգային ստանդարտները
- Կոռուպցիայի դեմ պայքարի համար մշակված ինստիտուտներ, օրենքներ և գործիքներ. տարածաշրջանում հակակոռուպցիոն ռազմավարություններ իրականացնելու քաղաքական դասերը
- Հակակոռուպցիոն մարմինների դերը կոռուպցիայի դեմ պայքարում
- Ֆինանսական վերահսկողություն. Վերահսկողության տարբեր մեխանիզմներ, Համագործակցություն Աուդիտի բարձրագույն մարմինների և այլ շահագրգիռ կողմերի միջև
- Եկամուտների կառավարում. Կառավարման գնահատում եկամուտների կառավարման ոլորտում, ընթացիկ և շարունակական զարգացում

- Կառավարման գնահատում եկամուտների կառավարման ոլորտում, ընթացիկ և շարունակական զարգացում
- Կառավարման խոցելիությունները պետական գնումներում. Իրավական շրջանակները, ներառյալ իրականացման և կիրարկման խնդիրները, Բողոքարկման մեխանիզմները և դրանց արդյունավետությունը
- Ենթակառուցվածքների պաշտպանություն կոռուպցիայի խոցելիությունից
- Կառավարման խոցելիությունը պետական ձեռնարկություններում
- Կառավարման խոցելիությունը կանխիկ հոսքերի և պետական պարտքի կառավարման մեջ
- Կառավարման հիմնախնդիրները բնական ռեսուրսների կառավարման մեջ
- Կառավարման հիմնական խոցելիությունները արդյունահանող արդյունաբերության արժեքի տարբեր փուլերում
- Թվայնացման օգտագործումը կոռուպցիայի դեմ պայքարում. ռիսկերը և մեղմացման միջոցառումները

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Դասընթացի ընթացքում փորձագետների կողմից ձևավորվել են աշխատանքային խմբեր, որոնք ստանալով պրակտիկ առաջադրանքներ պետական ֆինանսների կառավարման տարբեր ոլորտների վերաբերյալ՝ կատարել են առաջադրանքները և ներկայացրել դասախոսներին:

Ակտիվորեն մասնակցել եմ աշխատանքային խմբերի քննարկումներին, ներկայացրել ՀՀ պետական ֆինանսների կառավարման ոլորտում տեղի ունեցող բարեփոխումները, ինչպես նաև երկրների օրինակների ներկայացման փուլում իրականացվել է «Պետական գնումների համակարգը ՀՀ-ում» թեմայով ներկայացում:

Դասընթացի ավարտին տեղի է ունեցել հարց և պատասխան՝ դասընթացից ստացված արդյունքների վերաբերյալ, ինչպես նաև ներկայացվել է այն բարեփոխումների շրջանակը, որոնք կարևորվում են Հայաստանում ներդրման տեսանկյունից:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Դասընթացի շրջանակում հանդիպումներ չեն եղել և փաստաթղթեր չեն ստորագրվել:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Առաջարկություններ չեն եղել:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

Վարդուհի Վարդանյան

04.11.2024թ.